


ՏՆՕՐԷՆ - ԻՄՄԱՌԻԱՆԻ
Մ. ՄԱՄՈՒՐԻԱՆ

ԲԱԺՆԱՆՈՐԴԱԳՐՈՒՅԻՆ
ՏՐԵՒՆԱԿ 500 ՂՐԵ
ՎԵՍՄՍՆԱԿ 250
ՆՐԱՍՄՆԱԿ 150

Քառասորագրութիւնը կ'սկսի
ամեն ամսոյ 1 ին և 15 ի



Fondateur

M. MAMOURIAN

Directeur - Rédacteur en chef

H. MAMOURIAN

60 ARÉVÉLIAN MAMOUL,
JOURNAL ARMÉNIEN
QUOTIDIEN

ՕՐԱԹԵՐԹ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

100 ՓԱՐՍ

100 ՓԱՐՍ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Քիչն սկսեալ պիտի վճուռի ու վերջնական փուլի մը մէջ մանէ շան հարցը

Համաձայնական պետութիւններն որոշած են վերջացնել այս առկախ ինքնիշխանութիւնը և կասկած չկայ, ինչպէս անուղղակի կերպով ծանոց Անգլիոյ վարչապետն, որ մեծ տէրութիւններն համաձայնած են արեւելքի բոլոր խնդիրներուն վրայ:

Թուրքիոյ քաղաքական շրջանակներն, եթէ ստոյգ են հասած հեռագիրներն, կ'պատրաստուին բազմաթիւ պատուիրակներ զոկել Համաժողովին մօտ, թերեւս այն կարծիքն ունենալով, որ համաձայնական պետութիւնք պիտի վիճաբանին իրենց հետ, մինչդեռ օրինակներ կան մէջտեղ, որոց վրայ յենլով Թուրքիա պիտի հրաւիրուի ստորագրել ներկայացուած ու պարտագրուած դաշնագիրն և ոչ թէ անոր վրայ վիճել:

Իսկ այդ հաշտութենէն յետոյ ինչպէ՞ս պիտի տնօրինուի Հայոց ճակատագիրն, որքանի չափով պիտի գոհացուի տրուի հայկական բազմաբնուէն Հիմնաւոր քաղաքական վերջին անցուդարձերուն, անուղղակի և ուղղակի պաշտօնական անձերու ըրած ակնարկութեանց. այնպէս կ'կարծենք թէ՛ պէտք է բաւականաչափ զիջողութիւններով գոհացու մը ունենանք մեր փափաքներուն և չակնկալենք ընդարձակ ու մեծ Հայաստան մը, ինչպէս երազեցինք պահ մը մեր յաւակնտուութեանց թախտալով և մենք մեղադրուեցանք նոյնիսկ երբ կ'իջկից մասին, շուրջ վեց և թերեւս աւելի ամիսներ առաջ՝ վերապահութեամբ արտայայտուած էինք այս սիւնակներուն մէջ:

Հօրս «Քրդերի» Անգլիոյ արտաքին գործոց նախարարին վերջին յայտարարութիւնն բացորոշ է: Մէկ ծովէն միւս ծովն հայկական կառավարութիւն մը կ'իջկից անկարելի կ'համարուի որով հայերս պարտաւոր պիտի ըլլանք գոհնալով միմիայն սեւ ծովով և բնականաբար Փոքր-Ասիոյ հիւսիսային քանի մը նահանգներով, որոնք անտարակոյս պիտի միացուին Երեւանի հայ հանրապետութեան հողերուն հետ, կողմերու համար Հայաստանը:

Ուրեմն զէպի կ'իջկից խոսքով հայութեան անհեռատեսութիւնն և զէպի հոն դիմելու համար կարգ մը ինքնակոչ մեր զիւանազէտներուն ուղղութիւնն, կատարեալ վիճուած մը կ'ունենայ, որովհետեւ հայութեան համար բաւական տարօրինակ դիրք մը պիտի ստեղծուէր իր հայրենիքէն հեռու ավերու վրայ իր ցոյց տալիք գործունէութիւնն ու հոն գաղթականութիւն մը կազմելու փափաքը, մինչդեռ իրեն համար՝ համաձայնական պետութեանց՝ բնորոշ սերկամասերն մնային ամայի ու-թափուր, սպազայ այնպիսի անիրականալի հեռանկարներով, այնպիսի չիրագործուելիք մտասեւեուներով, որոնք երատեսներէ միայն կրնան երկնուել:

Բայց առայժմ խնդիրն այս չէ, այլ Անգլիոյ արտաքին գործոց նախարարին որոշ յայտարարութեան վրայ, որու պէտք է անդրադառնալ հայութիւնն, նըկատի ունենալու համար, որ Ամերիկայի չէզոքացումն, բնականաբար այսպիսի եզրակացութեան մը պիտի յանգեցնէր խնդիրն և համաձայնական մեծ պետութիւնք, իրենց նախապէս ընդունած ու հաստատած գաշնագիրները պիտի գործադրէին, անոնց մէջ մանր փոփոխութիւններ և սահմանազրոյսներութեւ ճշդումներ ներմուծելով:

Իսկ նեղուցներու վրայ եղած ակնարկութիւններէն սա եզրակացութիւնն կրնանք հանել, որ Անգլիոյ, Ֆրանսոս և Իտալիա համաձայնած են բոլորովին չէզոքացնելու նեղուցներն և Պոլսի եւս միջազգայնացնելու, թէ ինչ ինչ տէրութեանց յաւակնութիւններուն վերջ մը տալու և թէ՛ ապագայ Ռուսիան՝ կատարուած իրողութեան մը առջեւ զրած ըլլալու համար:

Սակայն պարագայ մը կայ որ մութ կ'մնայ և որու մասին որ և է ուղղակի կամ անուղղակի ակնարկութիւն մը չըրին պետութիւններն: Այսինքն ապագայ Հայաստանի, Թուրքիոյ յանձնառութիւններն որո՞ց կողմէ ի գործ պիտի գրուին:

Այս երկու ապագայ երկիրներու այս կէտն մութ կ'մնայ, մինչդեռ Միջագետքի, Սուրիոյ, ապագայ տրաքական հողամասերուն, Պաղեստինի երկրամասին համար որոշ են ձեռք առնուած կամ առնուելիք տնօրինութիւնները, չենք խօսիր Փոքր-Ասիոյ արեւմտակողմի քանի մը հատուածներուն վրայ, որոնց ճակատագիրն եւս վճուած ըլլալ կ'երեւի:

Ամերիկա՝ մերժած ըլլալով ընդարձակ հողերու վրայ տարածել իր հովանին, պիտի զիջանի թերեւս ստանձնել միմիայն Հայաստանի և Թուրքիոյ մաս կազմելիք երկրամասերուն հովանաւորութիւնն, իսկ հակառակ պարագային Համաձայնականութեան տէրութեանց պիտի վիճակի անոնց հակակշիռն ու վերին կ'կողմութիւնը ստանձնել, մինչդեռ այդ նորակազմ կառավարութեանց կազմակերպուելն ու հաստատ հիմնուած մայր խարսխելու:

Վերջապէս յառաջիկայ նորատարին յի է նորատոր անսկիւկաներով: 1920 տարին պիտի տեսնէ աշխարհի կատարեալ խաղաղութիւնն և այդ տարին է որ պիտի սկսին ժողովուրդներն իրենց անկեղծ զարմանելու նուիրական զբաղումով պարապել և ջանալ որ աշխարհի ընթացքը վերադին յաջողի վերստանալ իր բնականոն վիճակը:

Հայերն 1920ին է որ պիտի յաջողին վերջապէս իրազեկ դառնալ իրենց համար պէտքուր ճակատագրին և լրջօրէն գծել իրենց հետեւելիք ուղին, անալով իրենց տարամբանող մարտի և հետեւելով իրենց բնագրներուն ա-

ռանց տարուելու ամեն կողմէ փնջող հովերուն և տրուած անհիմն հրահանգներուն:

1920 տարին շուրջն է մեծ դեր մը կատարելու աշխարհի պատմութեան մեծ հատորին մէջ՝ ընդհանրապէս, և Հայոց դարաւոր պատմութեան էջերուն վրայ մասնաւորապէս:

Հ. Մ.

ԶՅՅՆՆԵՐՆ ՄԵՔ

Համակերպելու է ուրիշ միջոց չըկայ. բռնի համակերպութիւն մը թէ՛ և...:

Եւ ինչպէս չհամակերպուի երբ շատ աւելի անհամակերպութիւններու վարժուեցաւ առհասարակ մարդկութիւնն և մասնաւորապէս թրքաբնակ մարդկութիւնը:

Միւ չկայ քանի մը օրէ ի վեր և եթէ կայ, այնքան հազուադէպ ապրանք մըն է դարձեր, որ ամենու մատչելի չկրնար ըլլալ:

Աչքը լոյս բանջարակներուն, որոնց քարոզութիւններն ու հրատարակութիւններն չզօրեցին մարդկութիւնն զգաստացնելու և ահա անոնք կ'զատեն իրենց պատիժն և բռնի բանջարակները դառնալու կ'ատկուին ի չգոյէ միտի:

Այնպէս կ'կարծենք թէ՛ տարուան մէջ տասնորոշ ամիս, մարդ անօթի մնալու դատապարտուածի ըլլալ լայն ջարդէն միայն ուտելով, այս տարակութեան վրայ պիտի խնդան անշուշտ և իրաւունք ունին, անոնք որ միտ կ'ատեն և միտ չուտելով կ'կարծեն թէ մակերեսներու վրայ տասնեակ և աւելի տարիներ աւելի ապրելու նախապատուութիւն պիտի ունենան:

Ինչո՞ւ չէ, թող այդպէս կարծեն, սակայն մէն մի երկրի կլիման հա-

մեմատ է նաև հոն ապրող ժողովուրդին ուսեստեղէնի տեսակը:

Տաք երկիրներու համար քիչ շատ ըմբռնելի է միտէ հեռու պահելու ըստամոքսն, սակայն ցուրտ երկիրներու համար չեմ կրնար երբէք համոզուել թէ՛ մարդ բանջարեղէնով միայն կրնայ սնանիլ, ի բաց առեալ ստամոքսէ տառապողներն կամ միտի տրեղիք ունեցողները:

Ինչ որ ալ ըլլայ սակայն, տմեն մարդ իր ճաշակին կրնայ տէր ըլլալ, որ երբէք չկրնար վիճաբանութեան առարկայ դառնալ, ինչորն այն է, որ այսօր ճիշդմիրցին զրկուած է միտէն, և եթէ այս ընթացքը շարունակուի, օր մըն ալ բնաւ չգտնելու պիտի դատապարտուի, անոր տարապայման սղութեան պատճառաւ է միտն ալ՝ առանձնաշնորհեաններու յատուկ պերճանքի ուսեստեղէն մը պիտի գտանայ:

Պատերազմի շրջանին՝ թէ աւելի առատ էր միտն և թէ անբաղդատելիօրէն աման, ինչո՞ւ այս յանկարծական փոփոխութիւնն, չեմ հասկալ և ինձի հետ չեն հասկնար բոլոր անոնք, որոնք առանց միտի չեն կրնար տոկալ իրենց տնօրնայ աշխատութեանց:

Եւ եթէ չեմ սխալիմ զինադադարի շրջանին մէջ կ'զտուուինք և զեռ չհասանք հաշտութեան...:

ԵՍ

ՊՕԼՍԱԿԱՆ ԵՄՄԱԿԱՆԻ

(Մեր մասնաւոր քրքրակցեն)

4. Պօլս, 13 Դեկտեմբեր 1919

Քաղ. ժողովն այս շաբաթ առաւ կարևոր քայլ մը ևս: Թերայի կալածոց Հոգաբարձութիւնը վերածեց Ազգային կալածոց հոգաբարձութեան, անոր մատակարարութեան յանձնելով նաև թաղային ուրիշ եկեղեցիներու և գաւառային վանքերու ու դպրոցներու Կ. Պօլսոյ մէջ ունեցած կալուածներուն արգիւնաւոր շահագործութիւնը:

Այս որոշման մասին լրագրիւնիքն ոմանք թեր ու ոմանք դեմ արտայայտուեցան:

Թերայի կալուածոց հոգաբարձութիւնը մեր ամիսէն շատ քննադատուած հաստատութիւններէն մէկն է որ սակայն ասով նուազ արգիւնաւորութիւն չէ ունեցած: Անիկա իր քննադատելի բոլոր կողմերով, սխալներով, արեւելեանախաթըրքիականութիւններով, և մեզի սովորական «թէքլիֆ-տիղութիւն»ներով, ունի առաւելութիւն մը որ մեր մէջ գրեթէ ոչ մէկ հաստատութիւն ունեցած է: Անիկա ունի կանոնաւոր վարչութիւն և դրամական — կալուածային — սեղանա-

ւորական հաստատութեան մը համար անհրաժեշտ եղած կազմակերպութիւնն Անիկա իսկապէս սոզգային գործ մը ըլլալով հանգիստ ելեմական հաստատութիւն ըլլալէ բնաւ չէ գաղթած և իբրև իր տեսակին մէջ միակ կազմակերպութիւնն է որ ժողովրդային վըստաութեան արժանացած է:

Իրեն վերագրուած թերութիւններով, եթէ ունեցած է անիկա, գարծեալ օգտակար հաստատութիւն մը ըլլալէ չի գաղթիր, զի իրօպէս իբր նըմաշ և օրինակ ծառայելիք հիմնարկութիւն մը էր. որ այսօր վարչութիւնը կ'ուզէ օգտագործել ընդհանուր կալուածոց գիւանի հանգամանք տալով անոր:

Այս կարգադրութեամբ Ազգ. վարչական մեքենային անիւներուն տակ գրուած քարերէն մէկն ալ վերցուած կ'ըլլայ և վանքի վարչութիւնը ասով իր ձեռքին տակ ունեցած պիտի ըլլայ գիւան մը, կամ վճարեալ պաշտօնէտութիւն մը, որ ուրիշ գործ չպիտի ունենայ, եթէ ոչ միայն զբաղիլ այդ կալուածներու արգիւնաւորմամբ:

Այս կերպով թագ. խորհուրդներն ալ ազատուած կ'ըլլան կալուածներու վարձքերը տալն ամեն գանձերու տող-տուկէ, անոնց վարձակալութեան պայ-մանագրերը չիմելու և շատ անգամ աւել աւել քան ազատութեան ենթար-կուելու անախորժ գրութեանն. ու ա-նոնց յաջորդող շատ մը անհամ ըս-րաւենքէն որոնք միշտ կան:

Վարչական այս կարգադրութիւնը անոր համար եւ կը գտնուի օգտակար, վասնզի անկիւս քայլ մըն է այն հազ-դային գործերու մասին անուշաւտ այն սխալ ըմբռնումին դէմ, որ մեզի թոյլ չի տար շատ անգամ գործերը պահելու իրենց տրժանի տեղը և զա-նոնք խաղալիք կ'ընէ ասոր անոր ձեռ-քը: Երեւակայեցէք որ թաղերու մէջ եկեղեցական բազմաթիւ կալուածներ կան, որ թաղական ազաներ, քրտիքի բի ջուրով բարեկամ շահելու» գրութեաւ բ իրենց ծանօթներուն, բարեկամներուն, շահակիցներուն անհաւատուի կերպով ատեն գիծերով տուած եւ ի վնաս ազգին:

Բազմաթիւ են նաև մարդիկ որոնք իրենց հայ ըլլալու հանգամանքովը ինքզինքն ընտրուել են կերպով մը բանագրուել ազգային կալուածներ:

Մեր մէջ այս բնուէն մը շատ ար-բանուած է: «Ազգային գործերը» պէտք է ձրի տեսնուին, «ազգասիրտ բարքը բացատրութիւնը» որ «ճիշտ-բար» կը հասկնանք մանք, «ազգա-յին գործ է» երբ կ'ըլլուի, ամեն մարդ կը հասկնայ թէ ծայրը գրում չկայ. եւ որովհետև ամեն մարդ «ազգային» է, անոնց ամեն գործերն ալ պէտք է ըլլան անարժան:

Օտար հիւանդանոցի մը լիարժեքն վճարող մարդիկ երբ որ հարկադրուին ազգային հիւանդանոց երթալ, որովհ-ետև հաստատութիւնը «ազգային» է և իրենք ալ ազգին մէկ անհատն են ամեն ջանք ու ճիգ կը թափեն «ազ-գասիրտբար» հիւրընկալուելու համար, կամ եթէ վճարեն իսկ հազար ու մէկ դժվարակութեամբ աննշան գումար մը տալով կուզեն խոստովիլ:

Նոյն երևոյթը կը տեսնուի նաև մեր դպրոցներու մէջ: Մտղքները գրիթէ բռնի կ'ուզեն իրենց տղաքը ազգային վարժարան դնել տաանց թո-շակի «վարժարանը ազգային է, ին-չուհամար իմ տղա չպիտի ընդունին, գրում ուզեմ նէ կուտամ չուզեմ նէ չեմ տար»: Այս «թէքլիթիթիթ»ութիւնը և յարգանքի պակասը հոնուէ պ ազգա-յին հաստատութիւններու, մեր նկա-րագրին մէկ մասը կը կազմէ, մեր նշանաւոր թերութիւններէն մէկը, որ արագորելու համար կ'արժէ որ յատուկ ճիգ մը ըլլայ Ազգային կալուածներու մաստակարարութիւնը Ինքայի կալու-ածաց հոգաբարձութեան յանձնուելը այս ուղղութեամբ տանուած քայլ մըն է և ասոր համար կ'արժէ որ գնա-հատուի:

ԱՐԿՎԱՐ ԱՆԳԵՂԱՅԻ

ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆԸ ԶԷ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ԱՂԳԵՐՈՒ ԸՆԿԵՐԱՊՈՒԹԻՒՆԸ ԶԷ ԿԱԶՄՈՒՄԸ

Այսպէս հոն է որ տակուին չէ կազմուած Ազգերու Ընկերակցութիւ-նը: Տակուին չէն բաժնուած իր յանձնառութիւնները (մանա) որոնց գործադրութեամբը միայն կարգ ու կանոնը պիտի իշխեն ինչպէս խա-նակութիւնները վերջ գտնէին, երբ կազմութիւնը հաստատուած է տա-կուին չորոչուած յանձնառութիւն-ներու վրոյ: Դժուարութիւնները պի-տի ցցուին և աւելի լուր քան հետո-րական գուշակութիւնները, ամէն ա-նոնց որոնք Ազգերու Դաշնակցու-թեան իշխանութեան հաստատուին բերս ստանձնած են, թէ պէտք է հրաժարիլ Եւրոպացի Համաձայնա-կաններու ունեցած բնութեամբէն: Անոր արդիւի միջոցները խիստ անբաւա-րար պիտի ըլլային Գնումի պայմա-

նագրութեան մը որէնքին տակ միա-ցնելով զանոնք, ուզեցին կարգուի փո-խադարձ Օգնութեան Ընկերակցու-թիւն մը ի սպաս պիտուութեանց: Պիտի տեսնենք թէ պատշաճ էր, ամէն բա-նէ առաջ կազմել Ընկերակցութեան մը պիտուութեանց միջև խաղա-զութեան պահպանումին համար Թո-շոր ազգերը հոն պիտի ներկայանային միեւնոյն տիտղոսով, հասարակաց պայ-մանի ենթարկուած: Փոխանակ որ տ-նոնցիկ իր քաջանշխար ունենայ նոյ-նիսկ փոքրացած բանակի միջոցը, այս բնու պիտի ծանրանար Ընկերակցութեան վրայ: Խնդիր չպիտի ըլլար գիտնալ թէ այս կամ այն գրաւուած կարելի է, միջնդեա խորհրդարանները կ'ընդգը-մանու այդ մասին, իրաւասութիւն տալու:

Ազգերու բանակը պիտի գրուէր բոլոր դիրքերը: Այլուս Թուրքերը չպիտի կարենային յարձակիլ Հայերու վրայ զանոնք խեղդելու համար, ան-միջապէս որ անգլիական գունդերը նաև նստէին: Մենք չպիտի ունենա-յինք Պօլշէկի արշաւանքին սարսա-փը, որովհետև Լէնինի մը գոյու-թիւնը անկարելի պիտի ըլլար, և ու-րովհետև «առողջապահիկ գտնի» պի-տի գո՛ծէր ինքնաշարժութիւն արդէն իսկ քայքայման ենթարկուած երկր-ներու շուրջ:

Երա՛ջ մըն է այս թէ ապագան:

Միայն երա՛ջ մըն է:

Ուզեցէք զայն ունենալ այն ատեն ան պիտի ըլլայ ապագան: Ազգերու Ընկերակցութեան կամ Դաշնակցու-թեան հա՛կ քայքայութիւն ամենէն կա-տարի հակառակորդները որոնք, յայտ-նուպէս կուսակից են յաւիտանակուն պատերազմի մը, շատ սիրով կը յար-ձակին նախագահ Ուիլսոնի խորհրդա-նշական անձին դէմ: Մենք ամենքս գիտնենք թէ ան այդ մասին ոչ մէկ բանի կարող է և թէ Ազգերու Դաշ-նակցութիւնը չէր այն գործը զոր կե-րտակէր ձեռնի տիեզերքին: Հոս մենք կ'ընդունինք թէ ոչ մէկ բան անկա-տարելագործելի է և թէ քանի մը տարիներու դադար մեզի թոյլ պիտի տայ, ամենուն բարի կամեցողութեամբ կատարելագործել խաղաղութեան գոր-ծիքը:

Իւրերն է յաղթանակել մակբայ-ներով: Ինչպէս մտումը անար-գորութիւն մը գործեց իր այգանք-նէրով ճնշելով Դաշնակցիցներու ամե-նէն պարկիշտը: Մ. Ուիլսոն ոչ մէկ կառավարութիւն գտաւ կողմէ է, ինչ-պէս զայն հասկցնել կուզուի: Անիկա Ամերիկեան միջամտութիւնը հաշակեց, փութացնելու համար խաղաղութեան գալուտար: Եւրոպա եկաւ հաշտու-թիւնը կ'ընելու համար: Չնայապահեց համաժողովին, այլ հոն ներկայացուց իր երկիրը Համաժողովը մերժեց Ազ-գերու Դաշնակցութեան մասին անոր ըրած թելադրանքները:

Անտարտիոյս ամէն օր յառաջ եկող խառնակութեանց և զուր տեղը թափ-ուած արիւնի նոր հեղեղներուն առջև կը ցաւին որ յանձնառու և յանձնա-ռուի ժողովուրդները տակուին համա-ձայնութեան չեն մտած: Բայց Ամե-րիկա չվաւերացուց Դաշնակցիքը: Աւաղելի յապաղում, բայց ո՞րմէ կա-խում ունէր: Խորհրդարանականներէն, և ոչ նոյնքան Ամերիկեան, որքան Փրանսական կառավարութեան պի-տէն:

Բայց, հեռի գտնելէ, կը ճգնին պարզ շտեմներ: Մ. Ուիլսէ Եօսանէ զը-րեց խորը գիրք մը — խիստ նշանա-կելի վաւերագրութեամբ մը — Աղէտ-Բեանց պղծութիւնը վրայ, միակ նպատա-կով զայն ուրանալ: Ազգութեան տիրապետութիւնը, կ'ըսէ ան, վերջ գտած է եւրոպական գաղափարագիտութեան (խտէլիթի) մէջ: Եւ ազգերու ընկերակցութեան մէջ կը տեսնէ կայսերականութեան վախ-ճան մը միայն: «Համաշխարհային գե-րապետութիւն մը որ ազատ-ընկեր-

վարական գաղափարագիտութիւնը կը յուսոյ իրականացած տեսնել իր ան-փութութիւնները և իր յանձնապա-տան լուստեսութիւնները»: Լուստե-սութիւն կարելի է, բայց պայմանա-գրական լուստեսութիւն ելնէ ամե-նուն բարի կամեցողութիւնը թոյլ տայ Դաշնակցութեան (ԷԿ) ծրագրերը աւելի-լուր բանի մը վերածել քան շիճու պայմանագրութիւն մը: Նոյնպէս կա-րել է որ ազգութեանց (նախօնա-լիթէ) գերը վերջացած ըլլայ, բայց ինչ կը հասկնայ Մ. Ուիլսէ կօտնէ ազգութեան ըսելով: Պիտի տեսնուի որ տակու կը կազմէ գրիթէ տարող խնդ-րերը:

Ես չեմ ճանչնար աւելի պատշաճ սահման մը քան այն որ մեզի տա-լարկած է աքթ. Մասիսեան իր «Ազ-գութիւնները և Ազգերու Ընկերակցու-թիւնը» գործին մէջ, շարունակու-թիւնը «Յաղթանակի լուստեսութեան օգտու-գործում» ի վրայ իր աշխատութեանց: «Ազգ կը կոչուի այն ժողովուրդը ու-րուն սեպհական կամք մը արտայայ-տութիւն մը ունենալու իրաւունքը ճանչցուած է, և ընդհակառակը ազ-գութիւն է, այն ժողովուրդը որուն այս նախնական իրաւունքները կ'ու-րացուին»: (Մ. Ու. Փրանսիէն նախ-օնալիթէ բաւը, կը նշանակէ հպատակ ժողովուրդ, կամ հպատակութիւն):

Արդ կը մերժուին այս իրաւունք-ները այն ժողովուրդը, որոնք իրենց կամքը ճանչցնելու համար չունին Խորհրդարան և ոչ ալ պետութիւն մը յայտնելու համար իրենց իղծերը: Պաշտօնապէս իր քէ՛ ճա՛նչցուել ա-ռաջ նուիս-Սլուս, Չէքօ-Սլովաք ժո-ղովուրդները և ամեն անոնք որոնք ազատագրուական այս վերջին օրերս, բանակալներու լուծէն, աղէտ-Բեանք էին:

Եթէ ուրեմն ազգութեանց իշխա-նութիւնները վերջացած է, պատճառը այն է որ միմիայն պէտք է որ ազ-գեր գոյութիւն ունենան: Կարողեք համաձայնիլ թէ, եթէ կայ արդա-րութիւն մը, իրաւացի չէ մէկ քա-նիներու մերժել այն ինչ որ կը շնորհուի արիւններուն: Ասկէ գատ, յամենայն դէպս ժողովուրդ մը պարտի ապրիլ իր եկամուտներով, որպէսզի կարող ըլլայ կազմելու անկախ Պե-տութիւն մը: Այն պիտուութիւնները որ անոր փոխ պիտի տային զրամ կազմակերպուելու համար, աշխատա-կիցներ իր վարչական կազմը հաստա-տելու: զինուորական ոյժեր ի՞նչ կար-գը պահպանելու համար, չպիտի յո-ժարէր այլքան կարեւոր օժանդակու-թիւններ, առանց իրեն համար ազա-նովելու առնուազն նիւթական երաջ-խաւութիւններ: Եւ ինչի՞մ մէջ կրնան կայանալ այս ապահովութիւնները, եթէ ոչ տեսակ մը ժամանակուոր խնամակալի, սահմանաւոր տեսողու-թեամբ պաշտպանի հանգամանքին մէջ:

Արդ, կարգ մը հին և նոր տակա-ւին ոչ բոլորովին ազատագրուած ազ-գութիւններ, որոնք նոյնընտրելով այս խնամակալութիւնը իրենց այժմու են-թարկուած բանակալութիւնէն պէտք էին ընդունել զայն, ընդհակառակը կ'ընդգլխին բարեկամ պաշտպանու-թեան սկզբունքին դէմ: Անոնք աւելի յարգելի յաւակնութիւններ են քան ինչ որ կարելի է խորհիլ:

Դժուարութիւնը յառաջ կուգայ պաշտպան իրենանիէ և պաշտպանեալ փոխառուին մէջ յարաբերութեան մէջ: Այս պատճառով թիւնը որ կ'սպասնայ յարաբերութեանց, պիտի ան-յայտանար Ազգերու ընկերակցութեան ընդհանուր խնամակալութեան տակ: Մասնաւոր յանձնառութեանց գրու-թեան տեղ, համաշխարհային յանձ-նառութեան մը գրութիւնը, անտա-րակոյս նախընտրելի պիտի ըլլայ: Բայց աշխարհ կաւէ գունտի մը չափ կաւելի չէ: Չէ կարելի զայն բարեփո-խել լիալուսնի և լուսնային քառօրէի մը տեւողութեան միջոցին: Նախ պէտք էր կատարել յանձնառութեանց փորձը: (Շար.)

ԲՈՅԱՐԱՅԻ ԿԵՐՈՒՄ ԸՆԴՐՈՒ ԱՅԻ ՅԵՐԻԿՈՒՄ ԿԸ ԸՆԴՈՒ ՊՈՂՈՍ ՆՈՒՊՈՒՐ. — Ինչպէս յա է մեր ընթերցողներուն, տե, Դաշնակցութեան օրկանը Սօֆ «Հայաստան»էն արտասպելով առաջ հարորդած էր թէ Մր. Չէր հեռագիրով և նամակներով զգո-ցուցած էր, Պ. Նուպարը որպէս զ երկուութեամբ չլտանդէ Հայկա Հարցը: Մենք այն ատեն հերքե-այս յերեւածոյ հրատարակութի Այժմ Ազգային Պատուիրակուի նախագահը «Ժող. Չայն» իր հլ գրով կը հերքէ այս յերեւածոյը յայտնի էր արդէն թէ կատար էր միմիայն կուսակցական նկատ ներով և նպատակ ունենալով վա-րեկել մեր գատի ամենէն պատկ-լի վաստակաւորներէն մին Ահա հեռագիրը:

Բարից, 14 Դեկ

«Ձեր հեռագիրը խորագէս մացուց դիտ Ես երբէք չէրայ ստացած չեմ ո՛չ նամակներ և ո՛չ ազգիրներ որոնք անհաւատալի մ գրանքներ պարունակէին. հայոց թեկամ այնքան պահանաւոր դիւս դէտի մը կողմէ: կը խնդրեմ ձ բացարձակ կերպով հերքել: Այդ թիւանքները խիստ ցաւալի են նաւանդ այնպիսի ատեն մը երբ ըրդի մեր երկու պատուիրակութ ները և Ամերիկայի մեր ներկայա ցիչները կ'աշխատին կատարեալ մաձայնութեամբ, հետապնդելով նոյն ծրագիրը: ՆՈՒՊՈՒՐ»

«ԺՈՂՈՎՈՒՐԻ ԶԱՅՆԻ ՄԷՃ ԿԱՐԿԱՆՔ. — Հրատարակոյն բա-խուածութիւն. — Անցեալ կիրակի Բանակալ Սինէմա Բոթէի սր-մէջ Հայ Ռեւոլուցիոն կուսակցուի Բերայի Ակումբին կողմէ սարքը հանդէսը ներկայ գտնուեցաւ բա-կան բազմութիւն մը որ հակա-օգին խտուութեան փութացած էր կնդրելու ազգային ծանօթ գործի-րէն Պ. Պ. Լեւոն Մկրտիչեան և սեփ Գուշուհեանը: Սրանք ճոխ պով լուսազարդուած էր և բեմին կատը կար Հայկական մեծ դրո որուն երկու կողմը հայ արիւնքը հակ կեցած էին խորհրդանշելով ստանալ և անոր քա՛յ պաշտպանն Որոշեալ ժամուս նախագահ Պ. Գ. Գ. Փափաղեան հրահրեց բանս սեւու Պ. Լեւոն Մկրտիչեանը ու յատակ առագանութեամբ և դիւ հասկնալի բացատրութիւններով հլ-զեց ժողովուրդը թէ չի բաւեր կամ այն գաղափարը ընդգրկել ինքզինքը համակիր ցոյց տալ կամ այն քաղաքական կուսակ-թեան, այլ սրպէսզի հայ ժողովու-րդներու կազմակերպուել և ձ առնել ապագայ Հայաստանի կա-վարութիւնը որ անշուշտ ժողովր պետական սկզբունքներու վրայ պ հիմնուի, պէտք այժմէն ամեն հատ իր գաղափարին համապատ խանող կուսակցութեան յարի և գործակցութիւնը իսկպպէս բերէ նոր: Նոյնպէս ըսու թէ կառավալ-թեան տրուելիք ձեւը բոլորովին ն լին խնդիր մը ըլլալով, այսօր ընդհանուր Հայութեան վերածնոյ գին հանդէպ մեծ պարտականութի ներ, որոնք պէտք է կատարուին « մագործակցութեամբ», որուն անհզ ժեշտութիւնը շեշտեց այս փափուկ վճուական րոպէներուն մէջ:

Ա Ջ Դ

Ի դիտութիւն բնութագրող ժո վրդեան կը ծանուցուի թէ նորըն: Տ. Գրիգոր Արեղայ կարագետ հանդիւծեալ է իր անդրանիկ Ս. Պ տարագը մատուցանել և քսրողել Ստեփանոս Մայր եկեղեցւոյ մէջ Գիրակի (ՉԺ Դեկտ): Սկզբնաւորութիւն քառաձայն Պատարագի ի ժամ Գ. Հողաբարձութիւն Ս. Ստեփանոս եկեղեցւոյ (ԿԷԿ)

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐՈՐ

1938 ձորձ ճառ մը արտասանած էր անցեալ ուրբաթ օր, Անգլիական Խորհրդարանին մէջ թրքական հարցին վրայ, բայց հարկ տեսնուած է լուսաբանութիւն մը ընել այդ ճառին վրայ զոր կատարած է Լօյտ Քըրքըն, ծափահարութեանց մէջ: — Անգլիական հանրային կործիքը ըսած է ան, վերդովմամբ կը հետեի ֆրանսական մասնաւորին մէջ ծայր տուած պայքարին, պայքար մը որ զօրեղագէտ վարակուած է թրքաստրութեամբ:

«Չինք գիտեր թէ այս շարժումը ինչպէս ծնունդ առած է ֆրանսական մասնաւորին մէջ, բայց մենք մեր պարտականութիւնը կը կատարենք, իբր ներկայացուցիչ անգլիացի ժողովուրդին, յայտարարելու թէ այն պարագային երբ այս շարժումը պիտի բաժնէ ֆրանսայի համոզումներուն և հայեացքներուն մէջ մասը, ան Անգլիական հայեացքներուն վրայ ոչ մէկ կերպով փոփոխութիւն մը պիտի բերէ: Այս խօսքերը մեծապէս ազգած են Խորհրդարանին վրայ:

«ԹԱ» երկար յօդուածով մը կը քննադատէ Մ. Լօյտ ձորձի յայտարարութիւնները թրքական հարցին վրայ: «Այս յայտարարութիւնները կ'ըսէ «ԹԱ» չպիտի ուշանան զարմացնելու Եւրոպան, աւելի իրենց անակնկալ պարունակութեամբը, քան թէ իրենց կտրուկ հանգամանքին համար:

«Թուրքիոյ հետ խաղաղութիւն կնքելու այս որոշումը, առանց այլևս սպասելու Մ.Նահանգացի ներշնչուած է այն տեսակ հարց մը լուծելու անհրաժեշտութիւնէն, որ իւրաքանչիւր օր աւելի լուրջ և վտանգաւոր կը դառնայ:

Բայց «ԹԱ» համակարծիք չերևիր Լօյտ ձորձի հետ, ճառին այն մասին վրայ, ուր անգլիացի վարչապետը կը յայտարարէր թէ ներքին իրաւունքները պետք է ձգտել 1914ի նոյն պահպաններուն ձեռքին մէջ:

Այս փոխարեութիւնը բաւական յստակ չէ կ'ըսէ Բարիզեան այս մեծ օրկանը, թող ապու համար հետևութիւններ հանել իր խօսքերուն ճշգրիտ իմաստէն: Կարելի է որ այս սքողուած անցքը նշանակէ ունէ միջազգային յանձնախումբ կամ կազմակերպութիւն մը, որ ապագային պիտի ունենայ Տարտանէլի Մարմարայի և Վոսփօրի վրայ վիճակագրութիւն մը և հակակշիռ մը: Եթէ Լօյտ ձորձ այս ուղած է ըսել, չենք կործեր որ մէկը ընդդիմանար այսպիսի ծրագրի մը իրագործման: Բայց կարելի է որ Մ. Լօյտ ձորձ ըսել ուղած ըլլայ թէ Անգլիա կը մտածէ վաճառել Պոլսէն և ներդուցէն Սուլթանը և իր կառավարութիւնը: Այս պարագային մենք պիտի գտնուինք քաղաքականութեան մը առջև զոր դժուարաւ պիտի հասկնայինք:

«Անցեալ գարնան, Թուրքիոյ հարցը օրակարգի վրայ էր, ուր խնդրոյ նիւթ եղած էր վաճառել Սուլթանը Պոլսէն: Եթէ չենք սխալիր, բրիտանական ներկայացուցչութիւնն էր որ Բարձրագոյն խորհուրդի ներկայացուցչ, հնդկական պատուիրակները և այս պատուիրակները կուգային բողոքելու յանուն իրենց իսլամ հայրենակիցներու Թուրքիան Եւրոպայէ հեռացուցուելուն դէմ: Ծիշք էր որ այն ստան կը խօսուէր Պոլսոյ յանձնառութիւնը յանձնել Մ. Նահանգացի Սակայն չենք կարծեր որ Ամերիկայի մեկուսացումը բաւական եղած է այս ստանի փոխելու, անգլիական կառավարութեան տեսակէտները: Այս հեռացումը, արդարեւ չկրնար ոչինչ նուազեցնել Հնդկաստանի իսլամներուն բողոքներուն կարեւորութիւնը:

«ՏԵՅԼԻ ՄԵՅԼ» հետեւեալը կը գրէ Պոլսոյ ապագային վրայ: —

«Կայ ազգ մը որուն արդար և օրինաւոր պահանջումները Պոլսոյ վրայ թէև Համաժողովին չեն ներկայաց-

ուած սական պէտք չեն անարդուի Անգլիոյ կողմէ, իր քանի մը իսլամ հայտարարներուն հաճոյք պատճառելու համար:

«Միկո» ինդիքներ ներկայիս կը մտահոգին Համաձայնական պետերը: Առաջինը այն է թէ, պէտք է տալ Պոլսը Յունաստանին. կամ թէ զայն ենթարկել Ազգերու Ընդհանրացութեան հակակշիռին, Յունաստանի մասնակցութեամբ, որ այս պարագային պիտի վայելէ մի քանի մասնաւոր առանձնաշնորհումներ: Թէև յատուկ օրոշում չկայ դեռ հակայն ստոյգ կը նկատուի որ Պոլս պիտի ենթարկուի Ազգերու Ընդհանրացութեան հակակշիռին:

Երկրորդը այն է, որ Թուրքերու Պոլսէն սեկնումը ցաւաքին տպաւորութիւն մը պիտի թողու իսլամ ժողովուրդներուն վրայ, որոնք կողքին Պոլսը նկատել իրենց կրօնական ստանը: Բրիտանական կառավարութիւնը մասնաւոր հնգիկներէ իր ունեցած շահուն համար որոնք հերոսաբար և անձնուիրութեամբ կուռնցան, իր բոլոր ճիգերը պիտի թափէ զսեկնու համար լուծուած մը, որու շնորհիւ իսլամական աշխարհին զգացումները յարգուին: Անգլիա միւս կողմէ պիտի ապահովէ Փոքր-Ասիոյ նահանգներուն մէջ թուրք ժողովուրդին ազատ զարգացումը:

Ազգային Անցուդարձ

Առաջնորդարանէ կ'հարգուին մեզ: — Տեղույս Ամերիկ. Քրիստ Երտտ. Միութիւնը մտադրած է կտտարել Իզմիրի ամբողջ բնակչութեան մարդահամարը: Այս առթիւ կազմուած է կարգադիր յանձնախումբ մը որուն պատուոյ անդամ կարգուած է Առաջն. Տեղապահ Հայրը:

— Առաջնորդարան այցելած է Ատանայէն յոյն բժիշկ Եւսուսֆ Տանիելիտիս, ընկերակցութեամբ Տօքթ. Էնֆիլէճեանի Տօքթ. Տանիելիտիս Ատանայի հայոց կողմէ շատ սիրուած է և ինք ծանօթ է իբր ջերմ հայասէր մը: Յիշեալը կ'իլիկիտ Ազգային Միութիւնէն մասնաւոր նամակ մը բերած է, ուղղուել Իզմիրի ազգային իշխանութեան:

— Առջի օր Խմբագրատունն այցելեց ԱՖ. Գարահարարի Սարգիս Թուֆանեան, որ հայ տարագիրները Արաքներու քովէն հաւաքելու գործին մէջ մեծ նուիրում մը ցոյց տուած է, առանց ունէ ակնկալութեան: Ինք աւելն զտարագիրներ ընկողով պատած է Տէր-Ջօրի, Սափքար, Բաքար և Մէսքէնէի շրջակայքը և աշխատած է ազատել ցարդ արարներու լուծին տակ չարչարող հայ քարտէսները: Մինչև իր վերադարձը՝ փրկած է 107 Հայեր և զանոնք փոխադրած Հալէպ: Պ. Թուֆանեան մեզ տրամադրած է ցանկ մը ուր նշանակուած են իրենց անուններով այն հայ կիներն և ազգիկներն, որոնք տակաւին արաքներու քով կը մնան Տէր-Ջօրի և Բաքարի մէջ: Այդ տեղերու արար պաշտօնական անձերը հաստատած են ինքնութիւնն ու գոյութիւնը այս հայ ազգիկներուն, որոնք ժամանակի ընթացքին ուժացած ու այլասեռած ըլլալով ներկայիս չեն ուզեր վերագառնալ իրենց ազգին ծոցը: Այդ ցանկը մտադիր ենք հրատարակել մաս առ մաս, եթէ մեր սրտակեանքը ներքին:

— Աղջկանց Որբանոցի վարչութիւնը հետեւեալ նուիրատուութիւնները շնորհակալութեամբ ստացած է: Տիկ. Վ. Լազեանէ թիթիղ մը քարիւղ և արահի խոշոր լապտեր մը: Տ. Հայկուհի Օ. Փէշղիմաճեանէ 3 օխտ հէլփս և 10 հաց: Պ. Կարապետ Քէչեհանէ 1 ու կէս օխտ հէլփս:

Տեղական Լուրեր

ՀԱՆՐԱՅԻՆ. Առողջապահ տնօրէնութիւնը հետեւեալը կը ծանուցանէ: —

Վերջին 24 ժամուան ընթացքին Իզմիրի մէջ պատահած է երեք մահիկ (մին մահացու): Պուրնովարի մէջ թիֆուսի դէպք մը, Գօրտէլիոյ մէջ երկու հարսանիք:

ՏԵՂԻՈՅՍ Դաշնակից գրաքննութիւնը անորոշ ժամանակով դադարման դատարարած է թուրք թերթերէն «Շարք»ը:

ՔէՅՅԼԻԻ կը գրէ թէ Բարձր գումարի Պ. Սթէրիատէսի մօտ եղած զիմուսներու շնորհիւ կարելի պիտի ըլլայ ազատել քանի մը թուրք դատարարութեան անդամներ որոնց մէջ կը գլխաւորէին «Շարք»ի տնօրէն Զէքի պէյ և Տօքթ. Ֆէհմի, որ այդ թերթին մէջ յօդուած մը գրած էր: Թուրք թերթը կ'աւելցնէ թէ արքայական հրամանագիր մը պիտի ազատարձակէ այդ երկու դատարարութեանը:

ՎԵՐՋԻՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

27 Դեկտեմբեր 1919

ԱՄԵՐԻԿԱՅԵՆ ԳԱՂԹ

Ամերիկայի մէջ մասնաւոր օրէնքով մը ոգելից ըմպելիները արգիւտած ըլլալով, 86 հազար ամերիկացիներ Գուպա կղզին երթալու համար անցագիր ուղած են:

ԳԱՌԵԱԿ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԻՒՆ

Անգլիոյ, Ֆրանսայի, Իտալիոյ և Պելճիկայի միջև համաձայնութիւն մը կը պատրաստուի:

ՍԹԱՄՊՈՂԻՆՍԳԻԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՔ

Պուլկարիոյ նախարարապետը յայտարարած է թէ՛ նախկին թագաւոր Ֆէրիտ-Նանտի չընդդիմանալով Պուլկարիոյ պատերազմի մէջ մտնելը, մեղի ծանր պատասխանատուութեան մը ենթարկեց, մինչդեռ համաձայնական պետութիւններն ալ Տէսէ-Ալզանի մէջ զինուոր հանելով պուլկարները զսպնով պատերազմի արգելք պէտք չէ՞ին ըլլալ:

ԻՏԱԼԻԱ

Իտալիոյ նախարարապետ Մ. Նիթի խորհրդարանի մէջ յայտարարած է թէ Եւրոպայի մէջ տիրող անտեսական տագնապէն ամենէ առաջ Իտալիա պիտի ազատի և այս անգամ Իտալիոյ կցուող Դերմաններուն և Սլաւներուն ընդարձակ ոտնմանի մէջ անկասկած չի պիտի չնորհուի:

ԿԻՆԵՐՈՒ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ

Իտալիոյ խորհրդարանին մէջ անգամներէն մէկ քանիները կիներուն ալ ընտրութեանց իրաւունք տուու առաջարկ բերած են:

ՍՕՖԻԱԻ ՄԷՋ ԽԱՌՆԱԿՈՒԹԻՒՆ

Սօֆիայի մէջ ծայրայեղ ընկերավարականները ցոյց մը կազմակերպեցին ու գործադրեցին: Ցոյցը ի վերջոյ խառնակութեան փոխուած ժողովուրդին և կառավարութեան միջև իրարանցում մը տեղի ունեցած է և ուսմբեր պայթած են, այս ցոյցին մասնակցած են 40 հազար հոգի:

ՄՐ. ԹԱՖԹԻ ԳՈՐԾՈՒՆԵՆՈՒԹԻՒՆԸ

Ամերիկայի նախորդ նախագահ Մր. Թաֆթ վերայի դաշնագրին վաւերացումը ապահովելու համար հանրապետական կուսակցութեան միջև գրգռութիւններ յառաջ բերելու սկսած է:

ԱՄԵՐԻԿԱԻ ԿԱՐԾԻՔԸ

Ամերիկայի հանրային կարծիքը հիմնապէս դաշնագրին վաւերացման կողմնակից ըլլալով հանդերձ կը հակառակի Եւրոպայի փոխաւորութիւնը ընկելու և ազգերու ընկերակցութիւնը կազմելու գաղափարին:

ՎՍՏԱՀՈՒԹԻՒՆ

Իտալիոյ խորհրդարանը վստահութիւն յայտնած է Նիթիի դահլիճին:

ՎԵՆԻՉԷԼՈՍ Ի ԲԵՐԻՉ

Մ. Վէնիզէլոս Բարիզ հասած է ուր պիտի մնայ քանի մը օրեր միայն: Կրկին պիտի վերադառնայ Յունաստան ուր կ'ընէ պիտի մէկնի դէպի Բարիզ թրքական դաշնագրին ստորագրման համար:

ԱԼՊԱՆԻՈՅ ԲԱՆԱԿԸ

Կազմուելիք Ալպանիոյ բանակը, Իտալացի հրամանատար Վիթալի յանձնուած է: Ալպանական բանակը 12 հետեակ զօրաբաժնիներէ պիտի բաղկանայ:

ԴԱՐՁԵԱԿ ԳԱՅՁԷՐԸ

Գերման խորհրդարանին մէջ, նախորդ կայսեր Հոլանտական կառավարութիւնէն ձերբակալուելով Պրիլին զրկուելը թէև առաջարկուած է, սակայն վիճաբանութեանց իբր արգիւնք, որոշած է որ նախ քան այս ձեռնարկը, սպասեն կայսեր նախընտրին և անոր միջոցին, զործարկութեանց և որոշումներու մասին սկսուած պաշտօնական վաւերացումներուն հաստատութիւնը:

ՎԵՐՉԱՊԷՍ

Հասակ այնքան ասեմե իմեր անհամարժեքներն ապաստում՝ ճիշդեղանակ ԲԵՆՍԵ Ժա- մացոյցները:



ՎԱՅԱՆ ՉՄԻՌՆԱԿԵՍԵԱՆ/ Վաճառատներ ի Չուխա Պեսես- րէն, քիւ 13 — 15: Ընդհանուր ներկայացուցիչ Իզմիրի, Գոնիայի, Պրուսայի, Աստուսի նահանգներուն եւ Ար- շիպիդագուսի կղզիոյ: Կը ծախուին նաեւ ամեն առ ժամագործներուն իմ:

ՔԱՐՍՈՒԹՈ Գ. ԵԱԳՈՒԷ

ԵԱՆՏԷՎԻ ԽԱՆ 7

(Փէշտիմալճըլար պաշը)

Անոնք որ կ'փոփոքին Չամիչի գուա օդի գործածել, անորաւ մաքուր և խնամով պատրաստուած, ինչ զի- մեն վերեւի հասցէին, ի՛նչ մեծաքանակ և թէ փոքրաքանակ գնումներու հա- մար,

Գինը Մէր. ՄԻ ՕՅԱԻ 50 ՂՐԸ.

Անհատաւորի զին մը, որովհետեւ այս ըմպելին արտածութեան համար պատրաստուած է, բայց արտածելիա- լիլ չըլլալով տեղւոյս վրայ վաճառել արտուած է այս աման գնով:

ԿԱՀԱԳՈՐԾ

ՅՈՐՈՒԹԻՒՆ ՄԱՆՈՒԿԵՐՆ

(Ս. Ստեփաննոսի փակին մէջ)

Հիւանդութեան և զանազործութեան արհեստին վերաբերեալ ամեն տեսակ գործեր վերջին կոտորելութեամբ կը շինէ: Կ'առանձնէ ամեն տեսակ յանձ նառութիւններ:

Մաքուր և խնամեալ գործ: Գիները չափաւոր:

ՃԱՂՎՈՒՐԴԻ ՉԱՅՆԸ

Օր-ճեթ Կալ-Կալ և հարմար- արարողութեամբ

ՅՈՎՉԱՆՆԵՍ ԵԱԿՈՒԵԱՆ

Տարեկան բաժնեկիւն 700 զրշ:

ԿԱՐԱՊԷՏ ՄԱՐԱՆԿՈՉԵԱՆ

ԲԱՐԱԼԷԼ ԹԻՒ 30

ԳՈՐԾԱՐԱՆ

ԲԱՀԻՆԻ ԵՒ ՀԻԼՂԱՊ

ՇՈԳՒԸ ՇԱՐԺ ԳՈՐԾԱՐԱՆ

Սրահան 8000 օխա արտադրող պարզ եւ պիտակախառն

ԼԻԻՔՍԻ ՇԷԼՎԱ

ՄԱԿՈՒՐ, ՀԱՄԵՂ ԵՒ ԵԱԿԱՆ

Կ'ընդունին մեծաքանակ յանձնարարութիւնը լիբի տեսակները կը ծախուին վերեւի հասցէին և Հայոց Թաղ, Պալատներէ վա- ճառատները:

ՍՊԻՆՈՎԻԳՐՈՒԹԻՒՆ

Կրակի դեմ... NATIONAL UNION SOCIETY LTD. LONDON CENTRAL INSURANCE CO. LTD. LONDON Շուխիմի... PHOENIX ASSURANCE COMPANY LTD. LIVERPOOL Դիմելը մանրամասնութեանց հասկար. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՐԾԱԿԱԼՆԵՐ Լ.ԵՒ Լ. ՎԱՐՊԵՏԵԱՆ

ԵՊԱՐԱՆ ՄԱՍՄԻՐԵԱՆ

ԷԲՍՆՈՒԿՍ 1888ԾԾ

- ՏՊԱՐԱՆԵՍ մէջ կը տպագրուին գրքեր, զրբոյցներ, տետրակներ, յայտարարու- ցիւններ, հարստութեան հրաւիրագրիւններ, զեկուցատուներ ու ժամագրիւններ են: ՏՊԱՐԱՆԵՍ մէջ կը տպուին նամակալուրիւններ, պահարաններ, հաշուեցուցակ- ներ, ընկալագրեր, վերջապէս վաճառատան մը վերաբերեալ ամեն տեսակ տպագրական գործեր: ՏՊԱՐԱՆԵՍ մէջ կը տպուին տեղեկագրիւններ, երկնայեան նամակ-հրաւիրա- գրեր տուտակներ եւ վերջապէս տպագրական արհեստին վերաբերեալ ամեն տեսակ գործեր:

Ամեն լեզու: ՀԱՅԵՐԵՆ, ՅՐԱՆՅԵՐԵՆ, ԱՆԳԼԻԵՐԵՆ, ՅՈՒՆԱՐԵՆ, ԹՈՒՐԿԵՐԵՆ ՏԵՍԱԿՆԵՐՈՒ ՊԵՍՊՈՒՍՈՒԹԻՒՆ ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԿՈՆՆԵՐՈՒ Մտաւոր եւ խնամեալ գործ օրուան զիններու վրայ Տպարանս բաց է անուօտ միևնչեւ կես գիշեր խնդրանքներու համար

ՎՃԱՐՍՈՒՆՔ ԿԱՆԽԻԿ

Մ. Յ. ԲԱՐՈՒԿԵԱՆ (22)

ԼԵՈՆԱՐՏԱ

ՊԵՏՐԱՍԹԵՐԵՆ ՊԵՏՐԱՍՏ

ԼԵՈՆԱՐՏԱ.— (Չատուելով ՄԵՍ ՄԱՅՐԻԿԵՆ) Եթէ մտորած եմ - Եթէ անարժան կը թուիմ կեանքը Ձեր դի- տած բարձրօրէնակէտէն— յիշեցէք թէ դուք կը ծառայէք Մէկու մը՝ որ բա- րեկամ էր մեզու օրներու: ԵՊԻՍԿ.— Եթէ տեսնեմ թէ կը փնտռես հազարք փրկութիւնը քու բարեկամը պիտի ըլլամ: Կարելին պի- տի բնեմ այն ատեն: ԼԵՈՆԱՐՏԱ.— Օգնեցէք ինծի անցեալս քառելու: Ամէն ինչ է այդ ինձի համար— և շատ բան չկայ Ձեզի համար քննելու: Ես մի քիչ քողարաւ- վափական երեւոյթ է որ կը խնդրեմ, փոխանակ անպատուութիւններու: Պի- տի ջանամ որ մենք զուտարեք տե- սակցիւնք: Միայն թէ մի՛ վաճառէք զիս քան զի այդ անարգանքի ենթարկել կը շանակէ ինձի: Հաւատացէ՛ք որ ամօթի պատճառ պիտի չըլլամ Ձեզի և երիտասարդներու երախտագիտու-

թիւնովը պիտի վարձաւարուին ձեր բարի արարքը: ԵՊԻՍԿ.— Խորապէս տխուր եմ քեզի հանդէպ այսպիսի զիրք մը ըս- տանալ ստիպուած ըլլալուս: Խորհիլ հակամէտ ես թէ քորսիքու մէկն եմ. սակայն այդ չէ իրականութիւնը: Պէտք է նկատի ունենամ թէ հազարաւոր անձկալից խղճերու պահապանն եմ եւս: Եղբորդիս սիրոյն չեմ համար- ձակիր արհամարհել ինձ հանդէպ ըզ- գայուած յորդանքը ու իմ մէջ զրած վստահութիւններն. ոչ ալ կը համար- ձակիմ անտեսել մեր ամենուն հետեւ- լիլ պարտ եղած օրէնքը, Եպիսկոպո- սի մը համար փոքր բան մը չէ ինք- նին ինչ որ ես ըրած եմ գունդս բա- նալով քեռազկանս, երբ նկատի ու- նենաս այս օրերս Եկեղեցիին մէջ աի- բող անհամաձայնութիւնը: Ձեմ կըր նար, չեմ համարձակիր աւելի առաջ երթալ ու գունդս բանալ կնիւն մը որու ամբողջ ժողովուրդս— թէպէտ անիրաւարար— լա՛ւ չեմ ուզեր զգա- ցումներդ վիրաւորիլ աւելի առաջ եր- թալով: ԼԵՈՆԱՐՏԱ.— Իրաւ: ԵՊԻՍԿ.— Հաւատացէ՛ք, մեծ ցաւ կը պատճառէ ինձի: Անձնապէս վրաս յայտնի ազդեցութիւն մը ըրած էք: (Այս միջոցին ՄԵՍ մայրը ոտքի կիւլէ դուրս երթալու համար):

..ԱՐԵՒԵԼԵԱՆ ՄԱՄՈՒԼ..

Թերթիս ծաւալը աւելի ընդարձակուած ըլլալով, այժմ ի վի ձակի եւնի աւելի լայն տեղ մը թալ ծանուցանաց բաժնին, Յոյնիսի երէ ամեն օր հարկ ըլլայ միևնչոյն ծանուցումն կրկնել, ինչ որ ասկից առաջ ի վիճակի չէիմ ընելու: Գոհացոցիչ պարտանկեր փոխ կամ մեծ, մէկ կամ աւելի ծա- նուցանաց համար: Դիմումներ կ'ընդունուին անտարնէ միևնչեւ կես գիշ:

ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐՈՒՍ

ԼԵՈՆԱՐՏԱ.— Կ'երթա՞ք: (ԵՊԻՍԿՈՂՈՍ պատիւ կ'երթայ ու զանազակը կը հնչեցնէ): ՄԵՍ ՄԱՅՐ.— Խորիքս անցած է այս խնդիրներուն համար: Եվ, ինչ- պէս որ կը հասկնամ լաճներէս, վըս- տան եմ որ նոյնիսկ իրաւունք չունիմ հոս նստելու: (ՔՐՈՆԵԼԻՍ. Ներս կը մտնէ, թե՛ն կը բռնէ և զուս կը տանի): ԼԵՈՆԱՐՏԱ.— (Առաջ գալով) Արդ սա՛ կրնամ ըսել Ձերդ մեծապատուու- թեան թէ քաջութիւն չ'ունիք զուք: Հոս ինձի հետ գէմ առգէմ կեցած գի- տէ՛ք ինչ որ պարտիք ընել, սակայն չէք համարձակիր: ԵՊԻՍԿ.— Գուն կին մ'եւ— ուստի չեմ ուզեր պատասխանել: ԼԵՈՆԱՐՏԱ.— Կին ըլլալուս հա- մար էոր այսպիսի բաներ ըսիք այսօր ինձի՛ զոր պիտի չ'ընէիք— Չորավար Բողէնի, զոր օրինակ— մարդու մը որ արտօնուած է Ձերդ մեծապատուու- թեանը տունը գալ, հակառակ իր անցեալ կեանքին, նոյնպէս ներկային: ԵՊԻՍԿ.— Հոս պիտի չզայ սակ- յետոյ եւ չես կրնար ուրանալ թէ տարրերութիւն կայ քու երկու պա- րագաներուդ միջև, ԼԵՈՆԱՐՏԱ.— Յիրաւի տարրերու- թիւն կայ, սակայն ես չէի սպասեր այս մասին ըլլալիք խտրութեան: Ո ալ երևակայեցի թէ տէ՛ր իմ, զօրա- լորը և ոչ թէ տկարը պաշտպանել էր Ձեր պարտականութիւնը— մերժել օգնել անոնց որոնք անիրաւարար յոնցապարտ եղած են, իսկ քաջալի- րել մերկապարտանոց մեզքը: ԵՊԻՍԿ.— Կը կարծէ՞ք թէ ունէ օ- գուտ պիտի ունենայ սոյն խօսակցու- թիւնը երկարելիս: (ԱԿՈՔ կը բանայ զուռը ետեւի կողմէն ու կը կանչէ) ԱԿՈՔ.— Մօրաքո՛յր: ԼԵՈՆԱՐՏԱ.— ԱԿՈՔ: Օրհնեա՛լ Աստուած: ԱԿՈՔ.— (Առաջ գալով) Մօրաքո՛յր: ԼԵՈՆԱՐՏԱ.— Գիտե՞ս ուրեմն (ԱԿՈՔ զինք ԼԵՈՆԱՐՏԱՍԻ ԹԼԻՐՈՆԵՆ զը նետէ) զաւա՛կս: ԱԿՈՔ.— Վստահ էի թէ հոս պի- տի գտնուէիք, որորմա՛ծ Աստուած: ԼԵՈՆԱՐՏԱ.— Խեղճ զխաղ ժո ըն վէ, զաւա՛կս: ԱԿՈՔ.— Ո՛չ, չեմ կրնար Անհա- դուրժելի է այս: ԵՊԻՍԿ.— Առանձին մնալ կուզէ՛ք, տիկնիւններ: ԱԿՈՔ.— Ո՛ւրէ՛ Հակապարթ: ԵՊԻՍԿ.— Պաղտի գացած է: (Շարժակէլ)